ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8

ք. Երևան «11» սեպտեմբերի, 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղար **Սուրեն Գալստյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Վահագն Մխիթարյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **էլեկտրոնային արխիվացման և թվայնացման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:՝

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է **34944000 /երեսունչորս միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար/ ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

---

[20] *Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից.*[21] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ արդարադատության նախարարություն	**«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ**
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	**ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ՝ 900011018547	**Հ/Հ 1570020836060100**
ՀՎՀՀ՝ 02506264	**ՀՎՀՀ 02617951**
Ա. Զեյնալյան (ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«11» սեպտեմբերի, 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	79991160/2	**Էլեկտրոնային արխիվացման և թվայնացման ծառայությունները**	**Ըստ ստորև տեխնիկական առաջադրանքի**	**հատ**	**34944000 /երեսունչորս միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար/**	**104000**	**ՀՀ**	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2020թ.**
Յուրաքանչյուր ակտային գրանցման թվայնացման գինը կազմում է՝ 336/երեք հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամ:								

Էլեկտրոնային արխիվացման և թվայնացման ծառայությունների տեխնիկական առաջադրանք:

Օգտագործվող հասկացություններ:

Գործակալություն- ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն/ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալություն:

Համակարգ- ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության «Տեղեկատվական-որոնողական ավտոմատացված համակարգ»:

Օրենք- «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք:

Ակտային գրանցում- ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմինների կողմից իրականացվող քաղաքացիական կացության ակտային գրանցում:

Պատվիրատու- ՀՀ արդարադատության նախարարություն:

Կատարող- կնքվող պայմանագրով ծառայություններ մատուցող անձ:

Թվայնացում- ակտային գրանցումների էլեկտրոնային արխիվացում և թվայնացում:

1. Ներածություն

Գործակալության Համակարգը ծառայում է Գործակալության կողմից Օրենքով նախատեսված գործառույթների իրականացմանը: Համակարգի ներդրումը սկսվել է 2014թ. սեպտեմբերից և ներկա պահին այն իր մեջ ներառում է հետեւյալ ռեգիստրները, ենթահամակարգերը և տվյալների փոխանակման մոդուլները՝

- ՔԿԱԳ էլեկտրոնային ռեգիստր
- Տվյալների փոխանակման մոդուլ
- Հյուպատոսական համակարգի հետ գրանցումների իրականացման մոդուլ:

1.1. ՔԿԱԳ Էլեկտրոնային ռեգիստր

Հիմնական գործառույթներ՝

- Ծննդյան, մահվան, որդեգրման, անվան փոխման, ամուսնալուծության, ամուսնության և հայրության ճանաչման ակտային գրանցումների մասին Օրենքով նախատեսված տեղեկությունների գրանցում, ստուգում և որոնում.
- Ակտային գրանցումների մասին հաշվետվությունների ներկայացում:

1.2. Տվյալների փոխանակման մոդուլ

Հիմնական գործառույթներ՝

- ՀՀ քաղաքացիների անձնագրային տվյալների բեռնում.
- Պետական այլ շահագրգիռ գերատեսչություններին ակտային գրանցումների մասին տվյալների տրամադրում:

2. Մատուցվող ծառայությունների նկարագիրը:

Թվայնացման ծառայությունները ներառում են՝

1. Քսաներկու աշխատանքային օրվա հաճախականությամբ ընդունման-հանձնման ակտերի հիման վրա Գործակալության արխիվից թվայնացման ենթակա ակտային գրանցումների գրքերի տեղափոխում Կատարողի տարածք՝ պահպանելով ակտային գրանցումների գրքերի անվտանգությունը և ամբողջականությունը: Թվայնացումից հետո քսաներկու աշխատանքային օրվա հաճախականությամբ ընդունման-հանձնման ակտերի հիման վրա արդեն իսկ թվայնացված ակտային գրանցումների գրքերի հետ տեղափոխում Կատարողի տարածքից Գործակալության արխիվ՝ պահպանելով ակտային գրանցման գրքերի անվտանգությունը և ամբողջականությունը: Սույն կետում նշված ակտային գրանցումների գրքերի տեղափոխումը Գործակալության արխիվից դեպի Կատարողի տարածք և հակառակ ուղղությամբ պետք է իրականացվի տրանսպորտային միջոցով՝ բացառապես Կատարողի միջոցների հաշվին՝ ապահովելով դրանց ապահով տեղափոխությունը: Մատուցվող ծառայությունների ընդունում-հանձնումն իրականացվում է քսաներկու աշխատանքային օրը մեկ անգամ: Արդեն իսկ թվայնացված ծառայությունների խմբաքանակի հանձնման հետ միասին Կատարողը Պատվիրատուին է հանձնում տվյալ խմբաքանակի համար իրեն տրամադրված թվայնացման ենթակա գրքերի խմբաքանակը՝ ամբողջությամբ: Յուրաքանչյուր խմբաքանակի համար Պատվիրատուի և Կատարողի միջև ստորագրվող գրքերի ընդունման-հանձնման ակտը պետք է ներառի ստացած գրքերի քանակը, գրքերը կազմող ՔԿԱԳ տարածքային մարմինների անվանումները, յուրաքանչյուր գրքում ակտային գրանցումների քանակը, գրքերում առկա թերությունների նկարագրությունը եւ այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կհամարեն ընդունող և հանձնող կողմերից յուրաքանչյուրը: Ծառայությունների տվյալ խմբաքանակի ընդունում-հանձնում չի կարող իրականացվել առանց տվյալ խմբաքանակի համար ընդունող և հանձնող կողմերի միջև ակտային գրանցման գրքերի հետհանձնման-ընդունման ակտի ստորագրման:
2. Համակարգում յուրաքանչյուր ակտային գրանցման թվայնացման ընթացքում Օրենքով տվյալ տեսակի ակտային գրանցման համար սահմանված և բնօրինակ ակտային գրանցման մեջ լրացված տվյալների մուտքագրում համակարգի էլեկտրոնային գրառման համապատասխան դաշտերում: Էլեկտրոնային մուտքագրման ենթակա դաշտերը պարտադիր ներառում են տվյալ ակտային գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և հերթական համարը, ինչպես նաև՝

- ծննդի ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
- ամուսնության ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 29-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
- ամուսնալուծության ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 37-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,

- որդեգրման ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
- հայրության որոշման ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 55-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
- անվան փոխման ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 61-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
- մահվան ակտային գրանցման թվայնացման դեպքում՝ Օրենքի 67-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,

Միաժամանակ, եթե բնօրինակ փաստաթղթային ակտում կատարվել են ուղղումներ կամ լրացումներ կամ փոփոխություններ, ապա ակտի թվայնացված տեսքը պետք է համապատասխանի կատարված ուղղումներին և/կամ փոփոխություններին և/կամ լրացումներին՝ նշելով դրանց կատարման հիմքերը, ժամանակը և կատարող մարմնի անվանումը: Թվայնացված ակտային գրանցումը պետք է ամբողջությամբ համապատասխանի բնօրինակ ակտային գրանցմանը, եթե այլ բան չի նախատեսվում Գործակալության ցուցումով:

3. Յուրաքանչյուր ակտային գրանցման համար տվյալ ակտային գրանցման վկայականի թղթային բնօրինակի գունավոր սկանավորում /300-320 DPI կետայնությամբ եւ .pdf ձեւաչափով/ և ներբեռնում համակարգում տվյալ թվայնացման ենթակա ակտային գրանցման համար նախատեսված դաշտում: Յուրաքանչյուր թվայնացվող ակտային գրանցման համար սկանավորման ենթակա փաստաթուղթը կազմված է 2 էջից, յուրաքանչյուր էջի առավելագույն չափը՝ 210x297մմ: Սկանավորված էլեկտրոնային փաստաթուղթը պետք է լինի անզեն աչքով նույնչափ ընթեռնելի, ինչպիսին բնօրինակ թղթային փաստաթուղթն է:
4. Համակարգ մուտքագրված ակտային գրանցման մեջ նշված անձանց անձնական տվյալների համադրում ՀՀ Ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության կողմից վարվող բնակչության պետական ռեգիստրի տվյալների էլեկտրոնայյին շտեմարանի հետ: Անձնական տվյալների համադրումն իրականացվում է Համակարգում առկա էլեկտրոնային գործիքակազմի միջոցով՝ ակտային գրանցման մեջ նշված տվյալ անձի/անձանց Հանրային ծառայության համարանիշը տվյալ թվայնացված ակտային գրանցմանը կցելով և համակարգում գրառելու եղանակով, եթե գրառվող անձն ունի ՀՀ քաղաքացիություն և նրա տվյալներն առկա են ՀՀ Ոստիկանության ԱՎՎ բնակչության պետական ռեգիստրում: Հակառակ դեպքում ՀԾՀ դաշտում լրացվում է (---) երեք հաջորդող գիծ:

5. Թվայնացման ժամանակ Պատվիրատուի կողմից Կատարողին հանձնված թվայնացման ենթակա յուրաքանչյուր խմբաքանակի համար Կատարողը ստեղծում է թվայնացված ակտային գրանցումների բազա, որը ծառայությունների մատուցման յուրաքանչյուր խմբաքանակի հանձնման-ընդունման ժամանակ/տվյալ խմբաքանակի համար ամբողջությամբ/ Կատարողը էլեկտրոնային եղանակով փոխանցում է Պատվիրատուին: Թվայնացված ակտային գրանցումների բազայի փոխանցումն իրականացնում է Կատարողը՝ Համակարգի էլեկտրոնային գրանցամատյանում ներբեռնելու եղանակով, որի համար Պատվիրատուն Կատարողին է տրամադրում Համակարգ մուտք գործելու համապատասխան թույլտվություն/доступ/: Թվայնացված ակտային գրանցումների բազան պետք է ստեղծվի միջազգայնորեն ճանաչված տվյալների արտահանման/ներմուծման ձեւաչափերից որեւէ մեկով (ցանկալի է MySQL տվյալների բազայի ձեւաչափով, քանի որ ՔԿԱԳ էլեկտրոնային գրանցամատյանի տվյալների շտեմարանը ստեղծված է MySQL բազայի հիման վրա): 4-րդ կետում նշված անձնական տվյալների համադրումը՝ թվայնացման ենթակա յուրաքանչյուր խմբաքանակի համար, իրականացվում է այդ խմբաքանակի թվայնացված ակտային գրանցումների բազայի՝ Համակարգի էլեկտրոնային գրանցամատյանում ներբեռնելու ժամանակ: Ծառայությունների տվյալ խմբաքանակի ընդունում-հանձնում չի կարող իրականացվել առանց նախապես տվյալ խմբաքանակի համար թվայնացված ակտային գրանցումների բազայի ներբեռնում Համակարգի էլեկտրոնային գրանցամատյան:

6. Համակարգ մուտք գործելու համապատասխան թույլտվությունը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում կնքվող պայմանագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ կորպորատիվ ցանցին համակցման միջոցով: ԷԿԵՆԳ ՓԲԸ կորպորատիվ ցանցին համակցման եւ տեղեկատվական շտեմարաններին հասանելիության ստացման պայմանները հրապարակված են https://www.ekeng.am/hy/sub/e_manage էջում: Համակարգի մուտքի արտոնությունը կտրվի բացառապես թվայնացված ակտային գրանցումները Համակարգի էլեկտրոնային գրանցամատյանում ներբեռնելու նպատակով օգտագործելու համար: Կատարողին խստորեն արգելվում է Պատվիրատուի կողմից իրեն տրամադրված Համակարգ մուտք գործելու համապատասխան թույլտվությունն օգտագործել թվայնացման ծառայությունների մատուցման նպատակից չբխող այլ նպատակով, ինչպես նաև տրամադրել այլ անձի/անձանց: Հաշվի առնելով, որ Ակտային գրանցումները հանդիսանում են պետական նշանակության փաստաթղթեր, ապա սույն կետով սահմանված պայմանի խախտման և/կամ 1-ին կետով սահմանված Կատարողին հանձնված թվայնացման ենթակա ակտային գրանցումների գրքերի վնասման և/կամ անփույթ օգտագործման և/կամ դրանցում առկա փաստաթղթերի ոչնչացման համար Կատարողը ենթակա է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

3. Թվայնացման ծառայությունների նվազագույն ծավալները և արդյունքների ստուգումը:

Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո, ըստ Գործակալության գրավոր ներկայացված պահանջի, յուրաքանչյուր 22/քսաներկու/ աշխատանքային օրվա կտրվածքով ակտային գրանցումների թվայնացման ենթակա ընդհանուր նվազագույն քանակը կազմում է **26000 /քսանվեց հազար/** հատ ակտային գրանցում, որի մեջ մտնում են՝ ծննդի, մահվան, ամուսնության, ամուսնալուծության, անվան փոխման, հայրության որոշման և որդեգրման պետական ակտային գրանցումների տեսակները: Ընդ որում՝ թվայնացված ակտային գրանցումների քանակի հաշվարկման ժամանակ ծննդի և/կամ որդեգրման ակտային գրանցումների առկայության դեպքում դրանց քանակը բազմապատկվում է 1.2/մեկ ամբողջ երկու տասնորդական/ գործակցով և դրանց դիմաց վճարումն իրականացվում է այդ գործակցով բազմապատկումից հետո ստացված քանակի հաշվարկով:

2. Կատարողը, ծառայությունների մատուցման յուրաքանչյուր խմբաքանակի հանձնման ժամանակ Պատվիրատուին է ներկայացնում տվյալ խմբաքանակի մասով կատարված թվայնացման ծավալների վերաբերյալ հաշվետվություն: Հաշվետվությունը ներկայացվում է Համակարգում առկա թվայնացված ակտային գրանցումների վերաբերյալ հաշվետվական ձեւին համապատասխան, որն իրենից ներկայացնում է թվայնացված ակտային գրանցումների քանակը: Սույն կետում նշված հաշվետվական ձեւը հանդիսանալու է որպես թվայնացման ծառայությունների ծավալի ստուգման գործիք:
3. Ծառայությունների որակական բաղադրիչի ստուգումը՝ յուրաքանչյուր խմբաքանակի հանձնման ժամանակ, Պատվիրատուի կողմից կատարվում է տվյալ խմբաքանակից պատահականությամբ ընտրված ընդհանուր թվով 30/երեսուն/ թվայնացված ակտային գրանցման մեջ լրացված անձանց նույնականացվածության /ՀԾՀ-ի առկայություն և համապատասխանություն/ եւ ակտային գրանցումներին կցված սկանավորված փաստաթղթի /որակի և համապատասխանության/ ստուգման միջոցով:
4. Մատուցված ծառայություններում թերությունների հայտնաբերման վերաբերյալ Պատվիրատուն դրանք շտկելու պահանջ է ներկայացնում Կատարողին: Ծառայությունների հանձնման-ընդունման ժամանակ, ինչպես նաև պայմանագրի գործողության ընթացքում հայտնաբերված թերությունները Կատարողը պարտավոր է շտկել ամբողջությամբ իր միջոցների հաշվին՝ դրանց հայտնաբերման մասին իրեն ներկայացվող պահանջին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Այլ դրույթներ:

Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուի կողմից Կատարողին կարող են տրվել ծառայությունների մատուցմանը վերաբերող մեթոդական ցուցումներ՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

Հաշվի առնելով, որ Ակտային գրանցումները հանդիսանում են պետական նշանակության փաստաթղթեր, կատարողը պետք է ունենա տեղեկատվական անվտանգության կառավարման ISO 27001 հավաստագիր:

Ծառայությունների ընդունում-հանձնումն իրականացվում է ըստ քսաներկու աշխատանքային օրվա կտրվածքով թվայնացման ներկայացվող ակտային գրանցումների խմբաքանակների:

Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից սկսած մինչև 20.12.2020թթ. ներառյալ:

Գործակալության արխիվը գտնվում է Երևան քաղաքում:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ 02506264

Կ.Տ.

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951

Կ.Տ.

(ստորագրություն)

Հավելված N 2
«11» սեպտեմբերի, 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**79991160/2**	**Էլեկտրոնային արխիվացման և թվայնացման ծառայություններ**	-	-	-	-	-	-	-	-	**8736000**	**34944000**	**34944000**	**34944000**	**34944000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264

Ս.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/6
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«11» սեպտեմբերի, 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀՇՁԲ-20/8 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա-գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 11 » սեպտեմբերի, 2020թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀՕՁԲ-20/8 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

AMERIABANK

07.09.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.9434.20

Բենեֆիցիար՝
ՀՀ արդարադատության նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.9434.20
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից «ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև է 34,944,000.00 (երեսունչորս միլիոն ինը հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900011018547 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից Պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը՝ մինչև 27 հունվարի 2021թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am

AMERIABANK

07.09.2020թ.
O.AB.100.12CIB.PIED.0.9433.20

Բենեֆիցիար՝
ՀՀ արդարադատության նախարարություն

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.9433.20
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 3,494,400.00 (երեք միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900011018547 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև թիվ ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 Պայմանագրով Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը՝ մինչև 27 հունվարի 2021թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-20/8 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը

6.3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետություն
Արդարադատության Նախ-ն
№ 41797-20
08 09 20

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
(+374 10) 56 11 11
ameriabank.am